ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

միջև

Պարենային անվտանգության նվազագույն ստանդարտների ապահովման նպատակով փոքր և միջին ձեռնարկությունների կարողությունների զարգացմանն ուղղված գործառնական համագործակցության վերաբերյալ

Սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ ՓՀ) կնքվում է Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՍԱՏՄ), (պետական գրանցման համարը՝ 264.184.1069595, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի պող., 49/2) ի դեմս՝ ղեկավար Գեորգի Ռաֆայելի Ավետիսյանի, ով գործում է ՍԱՏՄ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից և Պարենի համաշխարհային ծրագրի (այսուհետ՝ ՊՀԾ) միջև, որը Միավորված ազգերի կազմակերպության և Միավորված ազգերի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության համատեղ ինքնավար օժանդակող ծրագիրն է, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Իտալիայի Հռոմ քաղաքի Պարկո դե Մեդիչի Վիա Չեզարե Ջուլիո Վիոլա 68 հասցեում, և որն իր ներկայացուցչական գրասենյակի միջոցով գործում է ՀՀ, ք. Երևան-0010, Պետրոս Ադամյան փող. 14 հասցեում (այսուհետ հավաքականորեն գործածվելիս՝ Կողմեր, առանձին գործածվելիս՝ Կողմ):

Հաշվի առնելով, որ ՍԱՏՄ-ն սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում վերահսկողություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող լիազոր մարմին է:

Հաշվի առնելով, որ ՊՀԾ-ն՝ հանդես գալով Միավորված ազգերի կազմակերպության առաջամարտիկ սովի դեմ գլոբալ պայքարում, կոչված է արտակարգ իրավիճակների և զարգացման հետ կապված աջակցություն ապահովելու՝ առավել աղքատ և պարենային առումով ամենաանապահով երկրների ու բնակչությունների շրջանում սովի և աղքատության հաղթահարման նպատակով:

Հաշվի առնելով, որ ՊՀԾ-ն Հայաստանում գործում է 2000 թվականի հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և ՊՀԾ-ի միջև կնքված Հիմնական համաձայնագրի (Հիմնական համաձայնագիր) և 2020 թվականի ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնող Արտաքին գործերի նախարարության և ՊՀԾ-ի միջև ստորագրված՝ ՊՀԾ 2019-2024 թթ. Երկրի ռազմավարական ծրագրի (ԵՌԾ) իրականացումը կարգավորող Փոխըմբռնման արձանագրության (Փոխըմբռնման արձանագրություն) շրջանակներում, և հաշվի առնելով, որ սույն ՓՀ-ն լրացնում է Հիմնական համաձայնագիրն ու Փոխըմբռնման արձանագրությունը՝ սույն ՓՀ-ի նկատմամբ ամբողջությամբ և առանց բացառության կկիրառվեն Հիմնական համաձայնագրի ու Փոխըմբռնման արձանագրության դրույթները:

Հաշվի առնելով, որ Կողմերը ստորագրում են սույն ՓՀ-ն՝ ամբողջությամբ ընդունելով և համաձայնելով պահպանել 1946 թվականի փետրվարի 13-ին Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին կոնվենցիայի դրույթները, որոնք կիրառելի են ՊՀԾ-ի նկատմամբ:

Հաշվի առնելով, որ, ինչպես նշված է ԵՌԾ-ում, ՊՀԾ-ն հետամուտ է նպաստելու Հայաստանում մինչև 2030 թ.-ը Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ-ներ) իրականացմանը, առանձնակի կարևորելով ԿԶՆ 2-ը, այն է՝ սովի վերացման հասնելը: ՊՀԾ-ն իր ուշադրության կենտրոնում է պահում Հայաստանի զարգացման օրակարգն ու ազգային առաջնահերթությունները, այդ թվում պարենային անվտանգության հասնելը նորարարական մոտեցումների միջոցով, որոնք խթանում են մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված ներդրումները, բարելավում բնակչության առողջությունը և նպաստում համաչափ տնտեսական զարգացման նոր խթանների ստեղծմանը: ՊՀԾ-ն միջոցներ է ներդնում հոգուտ համայնքների դիմակայունության ձևավորման, ինչը կդառնա տարատեսակ աղետների, օրինակ՝ բնական, հակամարտության հետ կապված, տնտեսական սթրեսային իրավիճակների կառավարման գրավական: Գործընկերության միջոցով, ՊՀԾ-ն նպատակ ունի սահմանելու Հայաստանում մինչև 2030 թ.-ը սովի վերացմանը հասնելուն ուղղված նոր սիներգիաներ և արդյունավետ միջամտություններ:

Հաշվի առնելով երկու հաստատություններում արդեն իսկ առկա համապատասխան կարողությունների հիմքով համագործակցության ներուժը, ՍԱՏՄ-ն և ՊՀԾ-ն միտված են է՛լ ավելի ամրապնդելու իրենց համագործակցությունը և սույն ՓՀ-ի միջոցով պաշտոնապես ծավալելու Հայաստանի Հանրապետությունում այս կոնկրետ գործընկերությունը՝ նպատակ ունենալով սատարել հայաստանյան փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ-ներ)՝ պարենային անվտանգության նվազագույն ստանդարտներին և պահանջներին համապատասխանելու նրանց կարողությունների ամրապնդման նպատակով:

Ընդունելով, որ Կողմերի միջև ավելի սերտ համագործակցությունն ու գործընկերությունը կնպաստեն Կողմերի ընդհանուր շահերին և նպատակներին:

Սույնով, միացյալ համագործակցության խթանման նպատակով, Կողմերը պայմանավորվում են հետևյալի մասին.

1. Փոխըմբռնման հուշագրի նպատակը և շրջանակը

1.1 Սույն ՓՀ-ի նպատակը Կողմերի միջև համագործակցության շրջանակ ստեղծելն է՝ Հայաստանի Հանրապետության ողջ բնակչության համար անվտանգ և որակյալ պարենի հասանելիությունն ապահովելուն միտված նրանց հիմնանպատակի իրականացման համար: Դա արվելու է ՓՄՁ-ների և մանր ֆերմերական տնտեսությունների գիտելիքներին առնչվող կարողությունների զարգացման ոլորտում ներդրումներ կատարելով. համագործակցության արդյունքում կխթանվի պարենային արտադրության շղթաներում ներգրավված մանր ֆերմերական տնտեսությունների իմացությունն առ այն, թե ինչպես կարելի է ապահովել պարենի անվտանգության նվազագույն ստանդարտների կիրառումն իրենց գործունեության ընթացքում: Այս գործակցությունը խթանում է Կողմերի գործունեության ազդեցությունը համագործակցային մոտեցման որդեգրման շնորհիվ:

1.2 ՓՄՁ-ների համար որպես ուղենիշ նախատեսված՝ պարենային անվտանգության նվազագույն ստանդարտները և պահանջները ներկայացնող ՍԱՏՄ գրքույկը A5 ֆորմատի 12-էջանոց ուղեցույց է (այսուհետ՝ ուղեցույց), որը մշակվել և հրապարակվել է 2017թ.-ին:

1.3 ՊՀԾ-ն նախատեսում է.

1.3.1. ՍԱՏՄ-ին աջակցել ուղեցույցի բովանդակության թարմացման հարցում, նպատակ ունենալով.
1.3.2 Այն համապատասխանեցնել պարենային անվտանգության ներկայիս քաղաքականությանը,
1.3.3 Հաշվի առնել այն մոտեցումները, որոնք շեշտադրում են պարենային անվտանգության միջոցառումներին առավելագույնս համապատասխանելու առումով ընթերցողի վարքագծային փոփոխության հավանականությունը,
1.3.4 Ապահովել կրթական տարբեր մակարդակներ ունեցող ավելի լայն լսարանի կողմից խնդրի ըմբռնումը՝ վիզուալ միջոցների ներառմամբ:
1.3.5 Արդիականացված ուղեցույցի մակետը պատրաստել տպագրության հանձնելու և տպագրված օրինակներից 800-ը տրամադրել ՍԱՏՄ-ին:

1.4 ՍԱՏՄ-ն նախատեսում է.

1.4.1. Ապահովել արդիականացված ուղեցույցի տեքստը մինչև 2022 թվականի սեպտեմբերի ավարտը,
1.4.2. Մշակել ուղեցույցի հատուկ հատված՝ կապված Հայաստանի Հանրապետությունում գործող ՓՄՁ-ներում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) HACCP) համակարգի ներդրման հետ:

1.5 Սույն ՓՀ-ի հիմքով համագործակցության հատկորոշված ոլորտների առնչությամբ Կողմերը պետք է միասնաբար հաստատեն սույն ՓՀ-ին կից ծրագրային փաստաթղթերով ներկայացված ռազմավարական և գործառնական պլանը, որում կսահմանվի Կողմերի համատեղ գործունեության աշխատակարգը: Բացի այդ, Կողմերի միջև կկայանան պարբերական հանդիպումներ՝ գործընկերության արդյունավետ և նպատակային իրականացումն ապահովելու նպատակով: Կողմերը պետք է համաձայնության գան յուրաքանչյուր Կողմից այդ հանդիպումների մասնակիցների ցանկի վերաբերյալ: Ի լրումն պարբերական հանդիպումների, ծրագրի ավարտին հանդիպում կկազմակերպվի Կողմերի միջև՝ ստացված արդյունքները պլանավորվածի համեմատ գնահատելու համար:

1.6 Սույն ՓՀ-ն և դրանում սահմանված միջոցառումները չեն նախատեսում ֆինանսական միջոցների որևէ փոխանցում մեկ Կողմից մյուսին:

1.7 Սույն ՓՀ-ի իրականացումը պետք է համահունչ լինի Կողմերի համապատասխան կանոններին, կանոնակարգերին և ընթացակարգերին, և Կողմերից յուրաքանչյուրին առնչվող ցանկացած օրենքներին:

2.Ապագա համագործակցության ուղիներ

2.1 Սույն ՓՀ-ի մաս կազմող գործունեությունից բացի՝ որևէ այլ լրացուցիչ կոնկրետ միջոցառումներ, որոնք Կողմերը համաձայնում են իրականացնել սույն ՓՀ-ի շրջանակում, կարող են հետագայում սահմանվել առանձին համաձայնագրերով, Գործառնական հատուկ ընթացակարգերով (ԳՀԸ-ներ) կամ նմանատիպ կարգավորումներով՝ պաշտոնապես ստորագրված յուրաքանչյուր Կողմի լիազոր ներկայացուցիչների կողմից: Այս պաշտոնական

օժանդակ կարգավորումները, ի թիվս այլնի, կհատկորոշեն գործունեության իրականացումն ու հասցեն, և ըստ անհրաժեշտության՝ յուրաքանչյուր Կողմի դերակատարմանն ու պարտականություններին, ֆինանսական միջոցների հատկացմանն ու կառավարմանը, հաշվետվություններին, մշտադիտարկմանն ու գնահատմանը վերաբերող դրույթները:

3.Գործողության ժամկետ, լրամշակում և լուծում

3.1 Սույն ՓՀ-ն ուժի մեջ է մտնում Կողմերի պատշաճ կարգով լիազորված ներկայացուցիչներից վերջինի կողմից ստորագրվելու օրը: ՓՀ-ն ուժի մեջ է մինչև 2022թ.-ի նոյեմբերի 30-ը:

3.2 ՓՀ-ն կարող է լրացվել, լրամշակվել կամ փոփոխվել Կողմերի փոխհամաձայնությամբ: Բոլոր այդ փոփոխությունները կամ լրամշակումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

3.3 Սույն ՓՀ-ն կարող է լուծվել յուրաքանչյուր Կողմի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին երեսուն (30) օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով: Նման դեպքում Կողմերն ըստ պատշաճի համաձայնության կգան այն քայլերի վերաբերյալ, որոնք կապահովեն, որ ՓՀ-ի շրջանակում սկզբնավորված միջոցառումները հասցվեն պատշաճ և բնականոն ավարտի: Այդուհանդերձ, վաղաժամ լուծումը կամ ներկայիս ՓՀ-ի 3.1 կետի հիմքով լուծարումը չպետք է որևէ ազդեցություն ունենա այն հետագա համաձայնությունների իրականացման և ավարտման վրա, որոնք ձեռք են բերվում Կողմերի միջև ըստ սույն ՓՀ-ի 2.1 կետով կամ ցանկացած այլ պայմանավորվածությունների վրա, որոնք որևէ Կողմի համար սույն ՓՀ-ի հիման վրա ցանկացած պարագայում պարտադիր պարտավորություններ են սահմանում:

4.Գաղտնապահություն

4.1 Կողմերը համաձայնում են առ այն, որ հանրային հասանելիություն չունեցող բոլոր նյութերը պետք է կոնֆիդենցիալ համարվեն, և բացառությամբ ՊՀԾ-ի կառավարման համար պահանջվող հաշվետվությունների, Կողմերից որևէ մեկի միջոցով չպետք է տրամադրվեն որևէ երրորդ կողմի՝ առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության:

5. Խորհրդանշաններ, անվանումներ և տարբերանշաններ

5.1 Կողմերից և ոչ մեկը չպետք է օգտագործի մյուս Կողմի, նրա մասնաճյուղերի և/կամ լիազոր ներկայացուցիչների խորհրդանշանը, անվանումը կամ տարբերանշանը, կամ դրանց վերաբերող հապավումները Կողմերի հրապարակումներում և փաստաթղթերում, եթե յուրաքանչյուր առանձին դեպքում նախապես չի ստացել վերաբերելի Կողմի համապատասխան գրավոր համաձայնությունը:

6.Արտոնություններ և անձեռնմխելիություններ

6.1 Սույն ՓՀ-ի որևէ կետ չպիտի ենթադրի բացահայտ կամ ենթադրյալ հրաժարում ՊՀԾ-ի որևէ արտոնությունից կամ անձեռնմխելիությունից:

7.Կարգավորող օրենք և վեճերի կարգավորում

7.1 Սույն ՓՀ-ն և դրան առնչվող ցանկացած վեճ կարգավորվում են միջազգային օրենսդրության համընդհանուր կերպով ընդունված սկզբունքներով և սույն ՓՀ-ի դրույթներով, որոնք գերիշխող են որևէ այլ օրենսդրության հողում պարունակող օրենքի կանոնների նկատմամբ:

7.2 Կողմերի միջև ծագած որևէ վեճ, որը չի կարող լուծվել բանակցությունների ճանապարհով, պետք է որևէ Կողմի միջնորդությամբ լուծվի արբիտրաժի միջոցով: Վեճին մասնակից յուրաքանչյուր Կողմ պետք է մեկական իրավարար դատավոր նշանակի, ապա այդ երկու իրավարար դատավորները պետք է նշանակեն երրորդին, որը հանդես է գալու իբրև արբիտրաժային դատարանի նախագահ: Եթե վեճի Կողմերից որևէ մեկը թերանում է իրավարար դատավոր նշանակել արբիտրաժի վերաբերյալ հայտին հաջորդող 90 օրվա ընթացքում, կամ եթե առաջին երկու իրավարար դատավորներն իրենց նշանակմանը հաջորդող 30 օրվա ընթացքում համաձայնության չեն գալիս երրորդ իրավարար դատավորի ընտրության հարցում, Կողմերից որևէ մեկը կարող է խնդրել, որ այդ նշանակումը կատարի Արդարադատության միջազգային դատարանի նախագահը: Կողմերը պարտավոր են հատուցել արբիտրաժի ծախսերն արբիտրաժային որոշմամբ սահմանված կարգով: Արբիտրաժի որոշումը պետք է ընդունվի որպես վեճի կապակցությամբ կայացված վերջնական վճիռ:

7.3 Ցանկացած վեճին վերաբերող ծանուցումները պետք է կազմվեն գրավոր:

8. Ծանուցումներ

8.1 Սույն ՓՀ-ին առնչվող պաշտոնական ծանուցումները պետք է հասցեագրվեն յուրաքանչյուր Կողմին ներկայացնող հետևյալ համակարգողներին, որոնք նշանակված են Կողմերի միջև համագործակցության գործադրման համար:

<u>ՊՀԾ-ի կողմից.</u>

Փոխտնօրեն, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Նաննա Սկաու,

Հեռախոսը՝ + 374 10 580538, բջջային՝+ 374 96937001

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0010, Պետրոս Ադամյանի փող., 14

Էլ.փոստի հասցեն՝՝ nanna.skau@wfp.org

<u>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից.</u>

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար՝ Գեորգի Ավետիսյան,

Հեռախոսը՝ +374 12 404041

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0051, Կոմիտասի պող., 49/2

Էլ.փոստի հասցեն՝ georgi.avetisyan@gov.am

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Սույն ՓՀ-ն չի փոխարինում Կողմերի միջև կնքված նախորդ համաձայնագրերը:

9.2 Սույն ՓՀ-ի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներով ամրագրված դրույթները շարունակում են ուժի մեջ մնալ սույն ՓՀ-ի գործողության ավարտից հետո ևս: Սույն ՓՀ-ն չի պարունակում ֆինանսական պարտավորություններ որևէ Կողմի համար:

9.3 Սույնով Կողմերի միջև նախատեսվող համագործակցությունը բացարձակ չէ և չի կարող բացառել Կողմերից որևէ մեկի ներգրավումը կամ համագործակցումը երրորդ կողմերի հետ այլ ձեռնարկումների շրջանակում :

9.4 Կազմված է 2 օրինակից, հայերեն և անգլերեն լեզուներով, Երևան քաղաքում: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Ի հավաստումն վերոշարադրյալի՝ կողմերն իրենց լիազոր ներկայացուցիչների միջոցով ստորագրում են սույն Փոխըմբռնման հուշագիրը:

ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ կողմից՝

ՂԵԿԱՎԱՐ

ԳԵՈՐԳԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ամսաթիվ 23.09.2022թ

ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ կողմից՝

ՓՈԽՏՆՕՐԵՆ, ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱՆՆԱ ՍԿԱՈՒ

Ամսաթիվ 23.09.2022թ